# «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 21-ի N1129-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

____________ 2018 թվականի N ______-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի N1129-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում հսկման ենթական թմրամիջոցների, հոգեմետ (հոգեգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների կազմը (ցանկը) հաստատելու մասին» N 1129-Ն որոշման հավելվածի «ՑՈՒՑԱԿ N1»-ի «կանեփի բոլոր տեսակներ» բառերից հետո լրացնել «բացառությամբ թելատու կանեփի ենթատեսակի (Cannabis sativa subsp. *sativa*), որում տետրահիդրոկանաբինոլը չի գերազանցում 0,2%-ը» բառերը:
2. Սահմանել, որ թելատու կանեփի սերմերի արտադրության, վերարտադրության, հավաստագրման, փոխադրման, պահպանման, իրացման և օգտագործման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Սերմերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: